| Գանձապահի հաշուի տարբերութիւնը | 15-19 |        |        |
| Նոտարին                        | 2-25  |        |        |
| Փոխադրութեան ծախս              | —50   |        |        |
| Դպրոցի հիմնադրի հոգեհանդ.      | 50—   |        |        |
| Վեհափառի ընդունելութ.          | 100—  | 330 91 |        |
| Ի հաշիւ դրամագլխի              |       | 156 94 | 487 85 |

**ՆՊԱՄՏՆԵՐԻ ԵՒ ԿԵՆՍԱԹՈՂԱԿՆԵՐԻ**

**ԾՈՒՏՔ**

|                                   |  |  |      |
|-----------------------------------|--|--|------|
| Ի հաշիւ դրամագլխի                 |  |  |      |
| փոխադրուած է իբրեւ անդառնալի ծախս |  |  | 500— |
|                                   |  |  | 500— |

**ԱՂԱԿԵՐՏՈՎԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐԻ**

**ԾՈՒՏՔ**

|                                 |  |  |      |
|---------------------------------|--|--|------|
| Ի հաշիւ դր                      |  |  |      |
| փոխադրուած է իբրեւ անդառն. ծախս |  |  | 6 44 |
|                                 |  |  | 6 44 |

# ՄՈՒՏՔԻ ՀԱՂԻԻ

ԿՐՆԴԻՏ

|                                |     |        |
|--------------------------------|-----|--------|
| Մանր իրերից                    | 250 |        |
| Զբաւոր աշակերտութեան ռաւան տի- |     |        |
| կին Աննա Վարդանեանից           | 100 | —      |
| Յետ ստացուած գումարներ         | 535 | —      |
| 5% Օրլիգացիայի կուրսի տարբեր.  | 380 | —      |
|                                |     | 487 85 |
|                                |     |        |
|                                |     | 487 85 |

## ՀԱՂԻԻ

ԵԼՔ

|                                 |     |       |
|---------------------------------|-----|-------|
| Արաէն քահ. Բաղրատունուն կենսաթ. | 120 | —     |
| Ուսուցիչ Հ. Տէր-Նիկողոսեանին    | 125 | —     |
| Ուսուցիչ պ. Ռ. Մելիք-Մուսեանին  | 100 | —     |
| Ախալքալաքի Հայոց դպրոցին        | 150 | —     |
| Վախճանուած աշակերտունու թաղման  | 5   | —     |
|                                 |     | 500 — |
|                                 |     | 500 — |

## ԵՒ ՀԱՆԳԵՄՆԵՐԻ ՀԱՂԻԻ

ԵԼՔ

Դրիմ և այլն

|  |  |      |
|--|--|------|
|  |  |      |
|  |  | 6 44 |
|  |  |      |
|  |  | 6 44 |

ԴՐԱՄԱԳԼԻՍԻ

ԴԵԲԷՏ

ԴՊՐՈՑԻ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ Հ.

Անդառնալի ծախս

20985 25

ՀՈԳԱՔԱՐՁԱԿԱՆ ԵՒ ՏԵՍՁԻ ԴԻԻԱՆԻ Հ.

Անդառնալի ծախս

1012 08

ՆՊԱՄՏՆԵՐԻ ԵՒ ԿԵՆՍԱԹ. Հ.

Անդառնալի ծախս

500 —

ԴԱՏԱՐԱՆԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԻ Հ.

Անդառնալի ծախս

166 92

ԱՇԱԿ. ՆԵՐԿ. ՀԱՆԴԷՍՆԵՐԻ Հ.

Անդառնալի ծախս

86 44

ԴՊՐՈՑԻ ՇԻՆՈՒԹ. ՎԵՐԱԲ. Հ.

Անդառնալի ծախս

1154 81

23825 50

ԴՐԱՄԱՊԼԻ

566809 80

590635 30

ԴԱՏԱՐԱՆԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԻ

ԾՈՒՏՔ

Ի հաշիւ դրամապլի

փոխադրում է իբրեւ անդառն. ծախս

166 92

166 92

# ՀԱՉԻԻ

ԿՐԵԴԻՏ

|                           |          |          |           |
|---------------------------|----------|----------|-----------|
| ՀԱՇՈՒԿՇԻՈՒ                |          |          |           |
| առ 1-ն սեպտեմբ. 1908 թուի |          |          | 572270 26 |
| ՔԱՐՎԱՆՍԱՐԱՅԻ ՎԵՐԱԲ. ՀԱՇԻԻ |          |          |           |
| զուտ արդիւնք ս/թ.         | 14034 81 |          |           |
| ՏՈԿՈՍՆԵՐԻ ՀԱՇԻԻ           |          |          |           |
| %/0 %/0 դրամադրսի         | 4173 29  |          |           |
| ԱՆԱԿՆԿԱԼ ՄՈՒՏԲԻ ՀԱՇԻԻ     |          |          |           |
| զուտ մուտք                | 156 94   | 18365 04 |           |
|                           |          |          |           |
|                           |          |          | 590635 30 |
|                           |          |          |           |

# ՀԱՉԻԻ

ԵԼՔ

|                       |       |        |  |
|-----------------------|-------|--------|--|
| Փաստարաններին         | 150 — |        |  |
| Դատարանական մանր ծախս | 10 50 |        |  |
| Նստարին               | 6 42  | 166 92 |  |
|                       |       | 166 92 |  |
|                       |       |        |  |

ՀԱՇՈՒԿՂՈՒ

ԴԵԲԷՏ

|                                                                           |         |           |           |
|---------------------------------------------------------------------------|---------|-----------|-----------|
| ԴՐԱՄԱՐԿՂ.                                                                 |         |           |           |
| Ֆաբրիկա ս. թ.                                                             |         | 407 71    |           |
| ՇԱՐԺԱԿԱՆ ԿԱՅԲ                                                             |         |           |           |
| Ֆաբրիկա ս. թ.                                                             |         | 7169 53   |           |
| ԴԱՍԱԿԱՆ ՊԵՏՈՅԲ                                                            |         |           |           |
| Ֆաբրիկա ս. թ.                                                             |         | 2113 26   |           |
| ԿՐԱՍԱԿԱՆԱՆՆԵՐԻ ՀԱՇԻԻ                                                      |         |           |           |
| Ֆաբրիկա ս. թ.                                                             |         | 3398 48   |           |
| ՊԱՐՏԱՊԱՆՆԵՐԻ ՀԱՇԻԻ                                                        |         |           |           |
| Ֆաբրիկա ս. թ.                                                             |         | 4177 50   |           |
| ԱՆՇԱՐԺ ԿԱՅԲԻ ՀԱՇԻԻ                                                        |         |           |           |
| Ֆաբրիկա ս. թ.                                                             |         | 457000 91 |           |
| 4 <sup>0</sup> / <sub>0</sub> ՊԵՏԱԿԱՆ ԲԵՆՏԱ.                              |         |           |           |
| Ֆաբրիկա ս. թ.                                                             | 90,000— |           |           |
| 0 <sup>0</sup> / <sub>0</sub> 0 <sup>0</sup> / <sub>0</sub> ՆՈՅՆ ԲԵՆՏԱՅԻՑ |         |           |           |
| սա. 1-ն սեպտ. 1909 թ.                                                     | 855—    | 90855—    |           |
| ԹԻՖԼԻՍԻ ՍՈ. ԲԱՆԿԻ ԸՆԹ.                                                    |         |           |           |
| ՀԱՇԻԻ                                                                     |         |           |           |
| Ֆաբրիկա ս. թ.                                                             |         | 1197 82   |           |
| 5 <sup>0</sup> / <sub>0</sub> ՕԲԼԻԳԱՅԻՆՆԵՐԻ ՀԱՇԻԻ                         |         |           |           |
| Ֆաբրիկա ս.թ. 3 օրվա ցիա 1000 ռ.,                                          |         |           |           |
| հաշուած 71-25 զնուած կուրսով                                              |         | 2137 50   | 568457 71 |
|                                                                           |         |           | 568457 71 |

ԱՌ 1-Ն ՍԵՊՏ. 1909 ԹՈՒԻ

ԿՐԵԴԻՏ

|                     |      |    |           |
|---------------------|------|----|-----------|
| ԿՐՊԱԿԱԿԱԼՆԵՐԻ ՀԱՇԻԻ |      |    |           |
| մաքուրդ ս. թ.       | 1082 | 76 |           |
| ՊԱՐՏԱՏԵՐԵՐԻ ՀԱՇԻԻ   |      |    |           |
| մաքուրդ ս. թ.       | 565  | 17 | 1647 93   |
| ԴՐԱՄԱԳԼՈՒՆ          |      |    |           |
| մաքուրդ ս. թ.       |      |    | 566809 78 |
| <hr/>               |      |    |           |
|                     |      |    |           |
| <hr/>               |      |    |           |
|                     |      |    | 568457 71 |
| <hr/>               |      |    |           |

**ՀՈԳԱԲԱՐՁԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

**Հոգաբարձութեան նախագահ**

**Գարեգին Արեւիկոպոս Սաթունեան**

**ԱՆԴԱՄՆԵՐ**

**Մայրապետ Յեփրոսինէ Աբամելիքեան**

**Փոխ-նախագահ Տիկին Դ. Թադէոսեան**  
**Մուչայեան Միքայէլ**  
**Նազարեան Լիբարիս**  
**Շիւեան Սիմէօն**



Աստղովում էին հետևեալ առարկաները.

| ԱՒԱՆԴՈՒՈՂ ԱՌԱՐԿԱՆԵՐԸ |                                       | III<br>բաժ. | I<br>դաս. | II<br>դաս. | III<br>դաս. | IV<br>դաս. | V<br>դաս. | VI<br>դաս. | VII<br>դաս. |
|----------------------|---------------------------------------|-------------|-----------|------------|-------------|------------|-----------|------------|-------------|
| 1                    | Կրօն . . . . .                        | 2           | 2         | 2          | 2           | —          | —         | —          | —           |
| 2                    | Եկեղեցական պատմութիւն . . . . .       | —           | —         | —          | —           | 1          | 1         | 1          | —           |
| 3                    | Կրօնների պատմութիւն . . . . .         | —           | —         | —          | —           | —          | —         | —          | 2           |
| 4                    | Հայոց լեզու <sup>1</sup> ) . . . . .  | 5           | 5         | 5          | 5           | 5          | 5         | 6          | 5           |
| 5                    | Ռուսաց լեզու <sup>2</sup> ) . . . . . | 5           | 5         | 5          | 5           | 5          | 4         | 5          | 4           |
| 6                    | Ֆրանսերէն . . . . .                   | —           | —         | —          | —           | 2          | 2         | 2          | 2           |
| 7                    | Հայոց պատմութիւն . . . . .            | —           | 2         | 2          | —           | 2          | 2         | 2          | 2           |
| 8                    | Հայոց աշխարհագրութիւն . . . . .       | —           | —         | —          | 2           | —          | —         | —          | —           |
| 9                    | Ռուս. պատմութիւն . . . . .            | —           | —         | —          | —           | —          | 2         | 2          | —           |
| 10                   | Ռ. աշխարհագրութիւն . . . . .          | —           | —         | —          | —           | —          | 2         | —          | —           |
| 11                   | Ընդհ. պատմութիւն . . . . .            | —           | —         | —          | 2           | 2          | 2         | 2          | 2           |
| 12                   | Բնագիտութիւն . . . . .                | 3           | 3         | 3          | 3           | 2          | 2         | 2          | —           |
| 13                   | Հայրենագիտութիւն . . . . .            | 2           | —         | —          | —           | —          | —         | —          | —           |
| 14                   | Ընդհ. աշխարհագրութիւն . . . . .       | —           | 2         | 2          | 2           | 2          | —         | —          | —           |
| 15                   | Թուաբանութիւն . . . . .               | 4           | 4         | 4          | 3           | 3          | —         | —          | —           |
| 16                   | Ալգեբրա . . . . .                     | —           | —         | —          | —           | 2          | 2         | 2          | 2           |
| 17                   | Երկրաչափութիւն . . . . .              | —           | —         | —          | —           | —          | 2         | 2          | 2           |
| 18                   | Ֆիզիկա . . . . .                      | —           | —         | —          | —           | —          | 2         | 2          | 2           |
| 19                   | Տիեզերագրութիւն . . . . .             | —           | —         | —          | —           | —          | —         | —          | 2           |
| 20                   | Քաղաքատնտեսութիւն . . . . .           | —           | —         | —          | —           | —          | —         | —          | 2           |
| 21                   | Հոգեբանութ. և մանկավարժ. . . . .      | —           | —         | —          | —           | —          | —         | —          | 3           |
| 22                   | Գրութիւն . . . . .                    | 1           | 1         | 1          | —           | —          | —         | —          | —           |
| 23                   | Նկարչութիւն . . . . .                 | 2           | 2         | 2          | 2           | —          | —         | —          | —           |
| 24                   | Ձեռագործ և ձեւագիտութիւն . . . . .    | 2           | 2         | 2          | 2           | 2          | 2         | 2          | —           |
| 25                   | Երգ և երաժշտութիւն . . . . .          | 2           | 2         | 2          | 2           | 2          | —         | —          | —           |
|                      |                                       | 28          | 30        | 30         | 30          | 30         | 30        | 30         | 30          |

2 դաս խմբական երգեցողութիւն

Ծանօթ. <sup>1</sup>, <sup>2</sup>, IV դաս. սկսած Հ. և Ռ. լեզուների հետ միասին առաջ է տարուել նոյն լեզուների դրականութիւնը:

Ուսուցչակա՛ն: խումբը, անցեալ ուսումնական տարուայ նման, սլարտագիր ժամերից զուրս շարաթը մի անգամ, իւրաքանչիւր դասարանում, ազատ ընթերցանութեան ժամ է ունեցել. այս տեսակ ժամերը մեծ մասով տարել են դաստիարակները. կարգացուել են դասարանին մատչելի գրքեր և ենթարկուել վերլուծութեան. զուրս է բերուել գրքի գլխաւոր միտքը. սրանով աշակերտուհիներին միջոց է տրուել հետաքրքրուել, ընթերցասիրութիւն առաջ բերել իրենց մէջ և առհասարակ քննադատաբար վերաբերուել իրենց կարգացածին: Այսպիսի ժամերին կարգացուել են նաև իրենց անցած այս կամ այն առարկան լրացնող գրքեր:

Ուսուցչական խումբը ամբողջ ուսում. տարուայ ընթացքում ունեցել է 46 Մանկավարժական ժողով: Նիստերին մասնակցել են բոլոր անդամները. բացակայութիւնները կարելի է տեսնել նախընթաց ցուցակում:

Այս նիստերից 6-ը եղել են հոգաբարձական և ուսուցչական խառն ժողովներ:

Վերոյիշեալ նիստերում կատարուած ուշագրաւ որոշումներից մէջ բերենք մի քանիսը.

1) Փորձնական դասեր տալ՝ միմեանցից օգտուելու, միմեանց հետ ծանօթանալու և դասաւանդումը զննելու հոգեբանական ու մանկավարժական հիմքերի վրայ:

2) Փորձնական դասեր տալ յատկապէս VII դասարանցիներին համար:

3) Անցած նիւթերի մասին ամսէ ամիս զեկուցանել:

4) Վերաքննել գալըոցի ուսման ծրագիրը և վերջնականապէս մշակել:

Վերջին երկու խնդիրը Մանկավարժական նիստերի զբաղման գլխաւոր նիւթն էր կազմում. գրեթէ նիստերի մեծ մասը դրանց էր նուիրվում: Բնական էր այդ, որպէսզի գալըոցը շուտով իր նորմալ ծրագիրն ունենար և միւս կողմից մէկ-մէկի աշխատանքին ծանօթանայինք:

Միւս նիստերում քննութեան են առնուել կարգապահական, կրթական-գալըոցական այլ խնդիրներ:

Աշակերտութիւնների ընտանեկան ու անհատական դրութիւնը

Դպրոցն անցեալ տարուայ նման աշխատել է աւելի ու աւելի յօտիկից ճանաչել իր աշակերտութիւնների ընտանեկան-տնտեսական կացութիւնը: Բացուել են սիրտ կտրատող թշուառ ընտանիքների պատկերներ:

Մանրամասնութիւններ մէջ բերելը կրկնողութիւն կ'իյնի, քանի որ անցեալ ուսում. տարուայ տեղեկագրում տպուած են. առանձին փոփոխութիւն չէ եղած անցեալի համեմատութեամբ:

Շրեթանների յառաջագիմութիւնն ապահովելու համար՝ դպրոցը անպատճառ պէտք է ունենար ընդհանուր առողջապահական հսկողութիւն և օգնութեան հասնէր չքաւոր հիւանդ աշակերտութիւններին:

Դարձեալ նախկին տարիների նման դպրոցի բժիշկը շաբաթը երեք անգամ հիւանդներին ընդունում էր դպրոցի փոքրիկ դեղատանը. տներում պատահած չքաւոր հիւանդ աշակերտութիւններին զնում էր այցելութեան և բժշկական օգնութիւն հասցնում. թէ՛ դպրոցում և թէ՛ տներում դարմանուող չքաւոր աշակերտութիւնները գեղն ստանում էին ձրիաբար:

Մեծամասնութեան ընտանեկան հակաառողջապահիկ և տնտեսական աննպաստ պայմաններն անկասկած վատ էին ազդում նրանց յառաջագիմութեան վրայ:

Աշակերտութեան մտաւորին նպաստող գրագարանը այս տարի ևս մասամբ հարստացել է:

Անցեալ տարի ունէր 1237 կտոր գիրք. այս տարի գնուել են՝ հայերէն 80, ռուսերէն 47. հայերէն նուիրուած են 16, ռուսերէն՝ 1 գիրք. ընդ ամենը 144. անցեալ տարուայ հետ միասին կայ ընդ ամենը 1381 կտոր գիրք:

Դպրոցն ստացել է մանկավարժական ու մանկական ամսագրեր:

Բոլոր բաժանմունքները իրաւունք ունէին շաբաթական մի անգամ դպրոցի գրագարանից գիրք վերցնել:

1908—1909 ուսում. տարում գրադարանից օգտուել են 406 աշակերտուհի. սրանք կարդացել են 2729 գիրք. միջին թուով իւրաքանչիւրը կարդացել է մօտ 7 գիրք. ամենաքիչը վերցրել են 3, իսկ ամենաշատը՝ 12 գիրք:

III բաժանմունքից սկսած մինչև III դասարանը ամենից շատ են օգտուել. IV—VII դաս. հետզհետէ պակասել է. նոյն իսկ VII-ին միջին թուով ընկնում է մի գիրք տարեկան: Բարձր դասարաններից ոմանք՝ ըստարարութիւն չստանալով դալրոցի գրադարանից, գրքեր էին վերցնում ուրիշ գրադարաններից:

Աշակերտուհիները բացակայել են տարուայ ընթացքում միջին թուով 47 դաս կամ 9 օր:

Նախկին տարիների նման փոխադրութիւնները կատարուել են տարեկան աշխատանքի հիման վրայ, որի ընդհանուր պատկերն է հետևեալը.

|    | Դասարան.     | Աշակերտ.<br>ընդ. թիւը | Փոխադր.     | Մնացող      | վերաբեր-<br>նութիւն | կամովին<br>հեռացած | Ամբ. տա-<br>րին հիւանդ | Մեռած | Ծանօթ.  |
|----|--------------|-----------------------|-------------|-------------|---------------------|--------------------|------------------------|-------|---------|
| 1  | III բ. հիմ.  | 37                    | 36          | —           | —                   | 1                  | —                      | —     | —       |
| 2  | III բ. զուգ. | 39                    | 37          | —           | —                   | 1                  | —                      | 1     | —       |
| 3  | I դաս.       | 48                    | 20          | 9           | 14                  | 5                  | —                      | —     | —       |
| 4  | II գ. հիմ.   | 40                    | 23          | 7           | 9                   | —                  | —                      | 1     | թորակտ. |
| 5  | II գ. զուգ.  | 42                    | 22          | 4           | 15                  | 1                  | —                      | —     | —       |
| 6  | III գ. հիմ.  | 40                    | 20          | 4           | 15                  | 1                  | —                      | —     | —       |
| 7  | III գ. զուգ. | 40                    | 18          | 4           | 16                  | 2                  | —                      | —     | —       |
| 8  | IV դաս.      | 46                    | 10          | 8           | 25                  | 3                  | —                      | —     | —       |
| 9  | V դաս.       | 44                    | 11          | 12          | 18                  | 3                  | —                      | —     | —       |
| 10 | VI դաս.      | 29                    | 10          | 7           | 12                  | —                  | —                      | 1     | թորակտ. |
| 11 | VII դաս.     | 20                    | 9           | 4           | 7                   | —                  | —                      | —     | —       |
|    |              | 425                   | 216         | 59          | 131                 | 17                 | —                      | 3     |         |
|    | 0/0-ով       |                       | 44, 42<br>% | 23, 89<br>% | 31, 69<br>%         | —                  | —                      | —     |         |

Դուրս գալով կամովին հեռացողներին ու գրեթէ ամբողջ տարին հիւանդութեան պատճառով չյաճախողներին

և աւարտածներին՝ ուսումնական տարուայ վերջին դպրոցում կար 390 աշակերտուհի:

Աշակերտութեան ընդհանուր թուից թոշակատու են 187, 44<sup>0</sup>/<sub>0</sub>: ձրիավարժ են 238, 56<sup>0</sup>/<sub>0</sub>:

Ձրիավարժներից 98-ը ոչ միայն ազատ էին ուսման վճարից, այլև դպրոցից ձրիարար ստանում էին դասական պիտոյքներ (81 հոգի զիրք, և 17 հոգի միայն տնտրակներ):

Քաղցած ու բոբիկ երեխաներին օգնութեան հասնելու նպատակով գործադրուել են հետևեալ միջոցները.—

1) Կ. Ն. Բ. Լնկ., դպրոցի խնդիրը յարգելով, ձրիարար ճաշ էր տալիս ծայրայեղ չքաւոր 8 աշակերտուհու:

2) Էժանագին ճաշարանը՝ նոյնպէս յարգելով դպրոցի դիմումը, ճաշ էր տալիս 5 աշակերտուհու:

3) Օգնութեան կարօտ չքաւոր աշակերտուհիներին քիչ թէ շատ լայն կերպով նպաստելու դիտաւորութեամբ մի ներկայացում կազմակերպուեց սրանց օգտին. սակայն հազիւ թէ հարիւր ընդհանր զուտ արգիւնք մնաց. այս գումարով 38 չքաւոր աշակերտուհու տրուեց 12 ձեռք հագուստ և 33 գոյգ կօշիկ:

Աշակերտութեան մտաւորին օգնող ֆիզիքանոցն էլ այս տարի մի քանի գործիքներով հարստացաւ:

Որքան ներկայ պայմանները թոյլ են տուել, ուսուցչական խումբը աշխատել է ֆիզիքական ու մտաւոր կրթութեան հետ զոնգընթացաբար առաջ տանել բարոյական ու գեղարուեստական կրթութիւնը: Բարոյականի նկատմամբ և՛ կենդանի օրինակով, և՛ ընթերցանութեան միջոցով և՛ առհասարակ դասերի ընթացքում այն բնական, անխուսափելի օրէնքն է աշխատել առաջ բերել, որ իւրաքանչիւր անհատ իր արածի պատասխանատուն է և պէտք է լինի. դպրոցը դէմ է եղել բարոյական խիստ պատիժներին:

Միտքը կրթելու և գեղարուեստական բաւականութիւն պատճառելու նպատակով եղել են աշակերտական գրական-երաժշտական հանդէսներ՝ նոր տարուն, բարեկենդանին,

Զատիկին. դպրոցն սոսանձնապէս տօնեց Գօգօլի 100-ամեակը՝ ամբողջ զբաղան-երաժշտական մասը Ռուս լեզուով:

Երկու անգամ աշակերտութիւնը տարուած է սինէ-մատօզրաֆ՝ յատկապէս ընտրուած պատկերների միջոցով դադափար տալու այրեցեալ դօտու բուսական-կենդանա-կան աշխարհի, կիսավայրենի ցեղերի, ծովի, շոգենաւի, աշխարհազրական տեղերի, դանազան կենդանիների մասին և այլն: Եօթներորդ դասարանցիք մայիսի վերջերքին տես-չի, ուսուցիչ-ուսուցչուհիների առաջնորդութեամբ էկս-կուրսիա կատարեցին դէպի Հաղրատ, Սանահին վանքերը և Ալլահվերդիի հանքերը:

## VII դասարանը

Սոսանձնապէս հետաքրքրութեան առարկայ էր այս ուսումնական տարում VII դասարանը. թէ դասատուները և թէ Հոգաբարձութիւնը ցանկանում էին տեսնել իրանց դասարանական պարագմունքները: Հետաքրքրութիւնն աւելի ուժեղացաւ, երբ յունվարից սկսած VII-ցիները սկսեցին յաճախել ուսուցիչ-ուսուցչուհիների տուած փորձ-նական դասերը: Իրենց դիտած ու նկատածների մասին ապա սկսում էին հարցեր տալ դասատուին և քննադատելով տրուած փորձնական դասը՝ դուրս էին բերում նրա պա-կաս ու առաւել կողմերը:

Դասատուներից փորձնական դասեր են տուել 10 ան-գամ հետեւեալ առարկաներից.

|                           |       |
|---------------------------|-------|
| Հ. լեզու . . . . .        | 3 դաս |
| Ռ. լեզու . . . . .        | 1 »   |
| Թուարանութիւն . . . . .   | 2 »   |
| Բնագիտութիւն . . . . .    | 2 »   |
| Աշխարհագրութիւն . . . . . | 1 »   |
| Երաժշտութիւն . . . . .    | 1 »   |

Այս դասերն սկսուել են յունվարի 23-ին և վերջացել ապրիլի 28-ին: Իրենք VII դասարանցիք սկսեցին փորձնական դասեր տալ Հոգաբարձութեան անդամների, դասատուներից շատերի և իրենց դասարանցիների ներկայութեամբ:

VII դասարանցիները տուին 9 փորձնական դաս հետեւեալ առարկաներից.

|                           |       |
|---------------------------|-------|
| Հ. լեզուից . . . . .      | 4 դաս |
| Ռ. լեզուից . . . . .      | 2 »   |
| Թուաբանութիւնից . . . . . | 2 »   |
| Բնագիտութիւնից . . . . .  | 1 »   |

Փորձնական դասերն սկսուեցին ապրիլի 20-ին և վերջացան մայիս 9-ին:

Թէ փորձնական դասերին և թէ առհասարակ դործնական պարապմունքներին առանձին դասեր չէին յատկացրուած, որովհետև հէնց ժամերի տեսակէտից դպրոցը հնարաւորութիւն չունէր:

Երաժշտութեան դասատու պ. Ռ. Մելիքեանը, իր պարտապիւր ժամերից դուրս, VII դասարանցիների հետ պարապել է երաժշտութեան տեսութիւնից 6 դաս:

Սյս ուսումնական տարոււմ VII դասարանը աւարտեցին հետեւեալները.

- 1) Ամիրբէգեան Սիրանոյշ . . . . . Սղնախեցի
- 2) Բաղդասարեան Նունէ . . . . . Թիֆլիսեցի
- 3) Դանիէլեան Ասողիկ . . . . . Հին Նախիջևանցի
- 4) Դեմիրճեան Սաթենիկ . . . . . Արդահանցի
- 5) Դուլեան Արեանատ . . . . . Շուշաւեցի
- 6) Թանգոյեան Մարիամ . . . . . Թիֆլիսեցի
- 7) Թուրանեան Զարուհի . . . . . Զաւալօղլեցի
- 8) Կարապետեան Աննա . . . . . Թիֆլիսեցի
- 9) Յարութիւնեան Փառանձեմ . . . . . Թիֆլիսեցի
- 10) Սահակեան Գոհարիկ . . . . . Լօռեցի
- 11) Սողոմոնեան Հայկանոյշ . . . . . Պարսկաստանցի
- 12) Փարսադանեան Հռիփսիմէ . . . . . Թիֆլիսեցի
- 13) Փիլիպպոսեան Խոսրովիդուխտ . . . . . Երևանցի
- 14) Քալանթարեան Սանդուխտ . . . . . Լօռեցի
- 15) Քուրդօղլեան Սիրանոյշ . . . . . Վրաստ. Ախալքալ.
- 16) Քօշեան Հռիփսիմէ . . . . . Ախալցխացի

Մեծամասնութիւնը հրաւիրուած է դաւառ վարժուհու պաշտօնով:

Էքստերն քննողներից օր. Երմոնիա Եղոյեան ստացաւ VI դասարանի միմիայն Հ. լեզուի վկայական, իսկ օր. Համասփիւռ Մելիք-Շահնազարեան ստացաւ VII դասարանական վկայական:

Ի դիմաց Մանկավարժական ժողովի

Տեսուչ՝ Տ. Ռաշմաճեան


20 սեպտեմբ. 1909 թ.

Թիֆլիս




Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page. The text is mirrored and difficult to decipher.

Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page. The text is mirrored and difficult to decipher.



Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page. The text is mirrored and difficult to decipher.

08074 no 6 1971 6



ՍՏՈՒԳՎԱԾ Է 1971 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳՐԱԴԱՐԱՆԻ ՀԱՄԱԳՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ  
ԲԻԲԼԻՈՏԵԿԱ  
ՀԱՅԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ



[ 504.]

A  $\frac{\bar{11}}{70512}$